



*Համարը N 07-Ն*

*Տիպը Հրաման*

*Սկզբնաղբյուրը ՀՀԳՏ 2011.08.16/20(403) Հոդ.319*

*Ընդունող մարմինը Առողջապահության նախարար*

*Ստորագրող մարմինը Առողջապահության նախարար*

*Վավերացնող մարմինը*

*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 26.08.2011*

*Տեսակը Հիմնական*

*Կարգավիճակը Գործում է*

*Ընդունման վայրը Երևան*

*Ընդունման ամսաթիվը 18.07.2011*

*Ստորագրման ամսաթիվը 18.07.2011*

*Վավերացման ամսաթիվը*

*Ուժը կորցնելու ամսաթիվը*

**✚ Կապեր այլ փաստաթղթերի հետ**

**✚ Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2006  
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի ԹԻՎ 123-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Գրանցված է»

ՀՀ արդարադատության

նախարարության կողմից

27 հուլիսի 2011 թ.

Պետական գրանցման թիվ 10011356

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

## Հ Ր Ա Մ Ա Ն

18 հուլիսի 2011 թ.

ք. Երևան

N 07-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի ԹԻՎ 123-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով.

#### Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2006 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման փորձաքննության կարգը, պետական գրանցման հավաստագրի ձևն ու նկարագիրը, Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղերի նոր գրանցում չպահանջող փոփոխությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 123-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) հրամանի 1.1-րդ կետով հաստատված Հայաստանի Հանրապետությունում դեղերի պետական գրանցման փորձաքննություն կարգի 2-րդ կետից հետո լրացնել նոր 2.1-րդ կետը հետևյալ բովանդակությամբ՝

«2.1. 2013 թվականի հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում դեղերի գրանցման նպատակով փաստաթղթերի փաթեթը անհրաժեշտ է ներկայացնել դեղերի գրանցման տեխնիկական պահանջների Միջազգային ներդաշնակեցման համաժողովի (ԱյՍԻԵԶ/ICH) կողմից ընդունված համընդհանուր տեխնիկական փաստաթղթի (ՄԻԹԻԴԻ/CTD) ձևաչափով:»,

2) հրամանի հավելված 1.1-ի 3-րդ, հավելված 1.2-ի 3-րդ և հավելված 1.4-ի 5-րդ կետերում «Հայաստանի Հանրապետությունում» բառերից հետո լրացնել «, Վրաստանում» բառը,

3) հրամանի հավելված 1.1-ի 13-րդ կետից հանել «Վերջիններիս բացակայության դեպքում, Հայաստանի Հանրապետությունում և ԱՊՀ երկրներում արտադրողների համար՝ սուր թունայնության ուսումնասիրության տվյալները:» բառերը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ի. Աբգարյանին՝ սույն հրամանը սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի ղեկավար պարոն Ս. Քրմոյանին:

Հ. Քուշկյան